Ա․ Աղայ Յովհաննէս Համբարձումեան. Եօլ Կէշէր Խան

1864.
6 Օգոստոսի
ըստ հին տումարի ։

Թիւ 23.
ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ ։

1864.
18 Օգոստոսի
ըստ նոր տոմ.

Registered at the General Post-Office for transmission abroad.

# ԵՐԿՐԱԳՈՒՆԴ

## ԼՐԱԳԻՐ ՄԱՆՉԷՍԹԵՐԻ

ՔԱՂԱՔԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ, ԳԻՏՆԱԿԱՆ, ԿՐՕՆԱԿԱՆ ԵՒ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ։

Հրատարակութեան, տպագրութեան եւ բաժանորդագրութեան կեդրոնատեղին է ի Մանչեսթր ։

—Նամակք, յօդուածք, գիրք եւ դրամներ (պարտ է ծախուց փոխարէն) ուղղել յանուն Ասպետ Կարապետ Վ. Շահնազարեանց, հետեւեալ հասցէիւ.

M. le Chevalier K. Vardapete Shahnazariantz,
151, Rumford Street, Manchester, (Angleterre.)

Տարեկան գինն կանխիկ ծախուց փոստայի, որ է Անգլիոյ եւ Ֆրանսայի ոսկիներով եւ շիլինով, է 25 շ. ֆ.
—Այս թերթերէն դուրս փոստայի ծախքն առանձին վճարելի է ։
—Վեցամսեանն . . . . . . . . . . 13 ,,
—Եռամսեանն . . . . . . . . . . 7 ,,
—Մէկ թերթի գինն ի Մանչեսթր է . . . . . 5
այլուր . . . . . . . . . . . 7
—Բաժանորդ լինելու ամէն ամսոյ մէջին եւ դասնեւինչին,

Ստորագրութեան տեղիքն են Կոստանդնուպօլիս Սարգիս Աղայ Մ. Հիսարեանի սենեակն ի Ղալաթա. —Իզմիր Մարկոսեան Յակոբ Աղայի սենեակն.—Հալէպ Յովհաննէս Աղայ Պիւրքճեանովի սենեակն. —Սուրբ Երուսաղէմ Արժանապատիւ Եսայի Վարդապետի սենեակն. —Աղեքսանդրիա (Եգիպտոս) Տէր Գասպարեան Ղազարոս Աղայի սենեակն. —Կալկաթա Գ. Պետրոս Սարգսեանցի սենեակն. —Բաթաւիա Գ. Մանուկ Որդանանեանի սենեակն. —Լոնտոն Աղայ Մարսուտոֆի սենեակն. — Փարիս Աղայ Պօղոս Արփաճեանի սենեակն.—Մարսիլիա Աղայ Մարգար Պօղիկեանցի և Աղայ Յարութիւն Անդրէասեանի սենեակներն ։ Առ այժմ ուղղներն կրնան վերոգրեալ սենեկաց մէկէն առնալ մինչև որ յատուկ գործակալներ հաստատեմք բազմաձայ և ընթերցասէր քաղաքներ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ ·

Տեսութիւն Քաղաքականութեան.—Գերմանիա.—Ծանուցում.—Վերջին Լուրեր.—Աւետարան ։

## ՏԵՍՈՒԹԻՒՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԵԱՆ

—Դանմարգի Ռիգսդաղն ամսոյս 6ին բացուեցաւ սրբայի առեմախօսութեամբն, որոյ նշանաւոր կտորնէ հետեւեալս. «Բոլոր Եւրոպայէն բարձի թողի ըլլալով պարտաւորեցանք խաղաղութիւն խնդրել մեր զօրաւոր թշնամիներէն ։ Ծանր էր այսչափ զոհ ընել, այլ ծանրագոյն եւ՛ պատերազմն շարունակել ։ Արքայի եւ ժողովրդեան միաբանութիւնն երջանկագոյն ապագայ կպատրաստէ ։»

—Փարիս ամսոյս 7ին երեկոյին լուր առին Թունիսի կառավարութենէն, ըստ որոյ Բէյի պաշտօնեայն Յուլիսի 28ին ի պաշտօնէ ծանոյց Գաղղիայի Ընդհանուր Հիւպատոսին թէ խաղաղութիւնն կատարելապէս հաստատուեցաւ Ցեղապահութեան մէջ հետեւեալ պայմաններով. 1. Բէյն կատարեալ համբաւթողութիւն կշնորհէ ամեն ապստամբներուն. 2. գլխահարկն 72էն 20 ղուրուշի կիջեցունէ. և 3. Մամլուկներու տեղ երկրայի Կայիդ կամ կուսակալներ կկարգէ ։

—Թէև Նիւ Եօրկէն Յուլիսի 27ին մեկնած շոգենաւն ամսոյս 8ին հասաւ. այլ նոր և կարեւոր լուր ամենևին չբերաւ ։ Գրանտ սպարապետ միշտ Պետերսբուրգի պաշարմանն եւ գնդակոծութեանն զբաղած է ։ Հարաւայինք, որք, քանի մի շաբաթ յառաջ, Մարելանդ արշաւեցին եւ Վաշինգտոն հանդերձ իր հասոյթովն Նախագահին սպառնացին եւ վերջապէս, ամբառ եւ մեծագին աւար և կողոպուտ ժողովելով տեղերնին դարձան. Պ. Նախագահ Լինկոլն, անագան արթննալով՝ քանի մի երկրայի զօրաց խումբեր Հնդեր զօրավարի հրամանին տակ, անոնց ետեւէն խրկեց որ աւարն, եթէ հնար է, խլեն եւ արշաւողներուն միւսանգամ կողոպուտի չելլելու խրատ տան ։ Հարաւայինք, բոլոր աւարն Պօտոմակի անդին անցունելէն յետոյ Հիւսիսայնոց դէմ դարձան, եւ սաստիկ կոտորած տալով հալածեցին եւ քանի մի թնդանօթ, ռազմամթեր, պաշար եւ այլեւ նորէն խլեցին ։

—Հիւսիսայնոց արդի հերոսն է զօրավար Շերմանն, որոյ քաջութեան, ճարտար շարժուածոյ եւ ճակատուց լուրերն թերթերուն նիւթ կպատրաստեն ։ Նա Յուլիսի 20ին Ատլանտա քաղաքին յանդիման սաստիկ մէկ ճակատ տուաւ Հուդ Հարաւայնոց զօրավարին եւ 6,000ի չափ մարդ ջարդեց անոնցմէ, թէ և ինքն 1,500 զինուոր կորսնցուց ։ Նոյն ամսոյ 22ին կռիւն վերստին խմբեցաւ և առջինէն աւելի արիւնահեղ եղաւ. ուր Հարաւայինք 7,000 մարդ կորուսին. իսկ Շերման՝ 2,500 հոգի, որ և թշնամին հալածելով՝ անոր հետ մէկ տեղ քաղաքն մտաւ և անոր մէկ մասին տիրեց, զոր տակաւին պինդ բռներ կեցեր էր մինչև վերջին շոգենաւի մեկնիլն ։ Եթէ Հարաւային զօրավար Հուդն օգնութիւն չստանայ և Ատլանտա Հիւսիսայնոց ձեռքն իյնայ՝ առաջնոց կորուստն անդարմանելի կըլլայ. վասնզի յիշեալ քաղաքն ոչ միայն Գէորգիայի մայրաքաղաքն է միայն ; այլ և Հարաւայնոց ամենամեծ և ամենալի զինարանն ։

—Քանի մի շաբաթ յառաջ Կոստանդնուպօլիս, Էնդիրնէի դրան մօտ հրկէզ պատահելով՝ Յունաց կայսերաց պատմական մէկ երեւելի յիշատակարանն ի լոյս ընծայեց, այն է Հերակլ կայսեր թագադրութեան դարպասն ։

Պերայի Դօմինիկեաններու և թաղական վարչութեան մէջ զուարճալի մէկ վէճ տեղի ունեցաւ ։ Ն. Վ. Սուլդանն թաղապետութեանն շնորհերէր մէկ հին պատ քակելու, և նիւթն ծախելու արտօնութեամբ, որոյ մէկ մասին վերայ շինուած է յիշեալ կրօնաւորաց վանքն ։ Ասոնք չկրնալով թաղապետութեան հետ համաձայնիլ, որ շատ սակ կպահանջէր, Սուլդանին բողոքեցին գրելով թէ

